ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2520

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Միսակի Կիրակոսյանի 29.06.2023թ. թիվ 10806 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Գասպար Վեքիլյանի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 04.10.2024թ. «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 04գ-001123 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 10.07.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023SM5DTE), 29.11.2023 թվականի Վանաձորի համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց, թիվ 16 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.24քմ) մետաղական ավտոտնակի, 6.0քմ մակերեսով հարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի, հարթակի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը, հարթակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Ուսանողական փողոց, թիվ 16 շենքի արևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ուսանողական փողոց, 16/16 ավտոտնակ, հարթակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2521

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 20Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Արսենի Դարբինյանի 22.10.2024 թվականի թիվ 17776 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2012014 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա թիվ 20բ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 20/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2522

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Ռոբերտի Այվազյանի 07.06.2023թ. թիվ 9188 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 03.10.2024թ. «Ռիգ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 02գ-001123 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 04.11.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023BQTQEC), 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց թիվ 2/1 հասցեի արևմտյան մասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 16.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 14.7քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 16.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի

նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց թիվ 2/1 հասցեի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Խորենացու փողոց 2/5 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2523

## ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ռ. ԲՈՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲԵԿՏԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՍԵՆ ՎԱԶԳԵՆԻ ԵԳՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ՆԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2202 ԵՎ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2351 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Վազգենի Եգորյանի դիմումը դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05092024-06-0059 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի բ) ենթակետով, 33.2-րդ և 34.2-րդ կետերով, 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1.Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Ռ. Բոշյան փողոցի թիվ 18 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.62քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.23քմ՝ որից 18.51քմ մակերեսով հասարակական սպասարկման օբեկտ, 2.72քմ մակերեսով պարիսպ) սպասարկման օբեկտը 383130 (երեք հարյուր ութսուներեք հազար հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 126.7քմ մակերեսով հողամասը, որից 43.24քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 192070 (հարյուր իննսունեկու հազար յոթանասուն) դրամով, իսկ 83.46քմ (126.7քմ-43.24քմ) մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 1112140 (մեկ միլիոն հարյուր տասներկու հազար հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արսեն Վազգենի Եգորյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 23 սեպտեմբերի 2024 թվականի «Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Ռ.Բոշյան փողոցի թիվ 18 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված սպասարկման օբյեկտը և դրանով զբաղեցված հողամասը Արսեն Վազգենի Եգորյանին օտարելու մասին» թիվ 2202 և 22 հոկտեմբերի 2024 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 23 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 2202 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 2351 որոշումները:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արսեն Վազգենի Եգորյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել սպասարկման օբեկտի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2524

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 49/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՅԿԻ ԱՍՐՈՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ԱՇՈՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Հայկի Ասրոյանի, Անահիտ Աշոտի Մխիթարյանի 19.06.2024 թվականի թիվ 02/10716 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10062024-06-0034 վկայականը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը ,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 49/1 հասցեում գտնվող Սուսաննա Հայկի Ասրոյանին, Անահիտ Աշոտի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 49/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.012300 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 101/78 քմ բնակելի նշանակության շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վարդանանց փողոց 49/10 բնակելի տուն:

բ.0.012300 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 19.20 քմ բնակելի նշանակության շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Վարդանանց փողոց 49/11 բնակելի տուն:

3.0.012300 հա հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն 1/2 բաժնեմասերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի   N 2525

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 44 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՅՈԺԱ ԱՐԵՎՇԱՏԻ ՋԱՏԻԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Արևշատի Ջատիկյանի դիմումը, 14.04.1987թ. տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 02.10.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-320/24 ի եզրակացությունը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 44 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 455.6քմ և կից 40.7քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1989թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 496.3քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Սերյոժա Արևշատի Ջատիկյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 44 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 455.6քմ մակերեսով հողամասին կից 40.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Սերյոժա Արևշատի Ջատիկյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց թիվ 44 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 496.3քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Սունդուկյան փողոց, թիվ 44/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2526

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 1/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐՈՆԻԿԱ ՍԵՅՐԱՆԻ ՀԱԽՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերոնիկա Սեյրանի Հախոյանի (ծնված՝ 16.04.1993թ.) 31.07.2024 թվականի թիվ 02/13118 դիմումը, 24.03.1987 թվականին տրված գույքային թերթը, 18.06.2024 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 4293 (նոտարական ակտի կոդ: 763-20240617-84-8041341) և թիվ 4294 (նոտարական ակտի կոդ: 763-20240617-84-8041337) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԿԱՐՏՈԳՐԱՖ ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք 1/1 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 332.0քմ. հողամասին կից, 299.9քմ. մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:Բնակելի տունը կառուցվել է 1974թ., դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 631.9քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Վերոնիկա Սեյրանի Հախոյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք 1/1 հասցեում բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 332.0քմ. հողամասին կից 299.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Ճանաչել Վերոնիկա Սեյրանի Հախոյանի սեփականության իրավունքը՝ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք 1/1 հասցեում գտնվող 631.9.քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց 3-րդ նրբանցք 1/1 հասցեում բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 1/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2527

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 18 (ՆԱԽԿԻՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 22) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՍԵՐԺԻԿԻ ՔՈՍՅԱՆԻ ԵՎ ՏՈՆԱՐԱ ՄԱՄԻԿՈՆԻ ՔՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տոնարա Մամիկոնի Քոսյանի դիմումը ով հանդիսանում է նաև Արթուր Սերժիկի Քոսյանի լիազորված անձը, 28.04.1980թ. տրված անհատական բնակելի տան գույքային թերթը, 21.11.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7128 (նոտարական ակտի կոդ: 594-20221118-84-6460100) և թիվ 7127 (նոտարական ակտի կոդ: 594-20221118-105-6460126) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 17.05.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված ՎՆ 1-143/23 Ի շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, 22.03.2023թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023FSLQJS), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 18 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ և կից 137.8քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-1990թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 391.85քմ, որից 101.7քմ և 14.8քմ մակերեսներով կառուցապատված հողամասերը գտնվում են ընդհանուր օգտագործման տակ(ընդհանուր բաժնային սեփականություն) կից տնատիրությունների միջև: Տոնարա Մամիկոնի Քոսյանի և Արթուր Սերժիկի Քոսյանի բաժնեմասը կազմում է 333.6քմ (391.85-(101.7:2)-(14.8:2)):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Տոնարա Մամիկոնի Քոսյանի(1/2) և Արթուր Սերժիկի Քոսյանի(1/2) ընդհանուր

բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 18 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 333.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 391.85քմ, որից 101.7քմ և 14.8քմ մակերեսներով կառուցապատված հողամասերը հանդիսանում են ընդհանուր բաժնային սեփականություն կից տնատիրությունների միջև: Հայկ Վահեյի Ամիրայանի բաժնեմասը կազմում է 333.6քմ (391.85-(101.7:2)-(14.8:2)):

2.Ճանաչել Տոնարա Մամիկոնի Քոյանի(1/2) և Արթուր Սերժիկի Քոյանի(1/2) սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 18 հասցեի 333.6քմ (391.85-(101.7:2)-(14.8:2)) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ(համաձայն շինությունների բնութագրի):

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 18 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Զոր. Անդրանիկի փողոց, թիվ 18/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2528

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃ 4Գ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շիրակի խճ թիվ 4գ հասցեին կից գտնվող 0.04405 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակի խճ թիվ 4գ կից գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Շիրակի խճուղի, 4/15 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2529

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1879 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Զավենի Հովսեփյանի 10.10.2024թվականի թիվ 17055 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 18 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1879 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08.10.2024 թվականի թիվ Կ-08102024-06-0147 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 18 դեկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 25/30գ հասցեում գտնվող, Ազնիվ, Հովհաննես, Կարինե և Մարիամ Հովսեփյաններին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած հողամասը նախապատվության իրավունքով օտարելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1879 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 1-ին կետը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Վանաձոր քաղաքի Լազյան փողոց 25/30գ հասցեում գտնվող, Ազնիվ, Հովհաննես, Կարինե և Մարիամ Հովսեփյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած 18,0 քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 291180 (երկու հարյուր իննսունմեկ հազար հարյուր ութսուն) դրամով, նախապատվության իրավունքով, համապատասխան բաժնեմասերով, ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Ազնիվ Աշոտի Հովսեփյանին՝ 1/2 բաժնեմաս, Հովհաննես Զավենի Հովսեփյանին 1/6 բաժնեմաս, Կարինե Զավենի Հովսեփյանին 1/6 բաժնեմաս և Մարիամ Զավենի Հովսեփյանին 1/6 բաժնեմաս»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2024 թվականի N 2530

### ԱՐԵՆ ԱՐՍԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ելնելով բողոքարկված վարչական ակտի նպատակահարմարության տեսանկյունից, քննարկեց Արեն Արսենի Գևորգյանի կողմից 14.10.2024 թվականին ներկայացված թիվ 02/17218 վարչական բողոքը՝ Վանաձոր համայնքի ղեկավարի 23 օգոստոսի 2024 թվականի «Արեն Արսենի Գևորգյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1962 որոշման դեմ:

Վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվեց գործում առկա ապացույցներով: Լրացուցիչ ապացույցներ վարչական մարմնին չեն ներկայացվել:

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 29.07.2024թ. կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Մ-6 (Մ-3 հատման կետ) Ալավերդի-ՀՀ սահման (Բագրատաշեն) միջպետական նշանակության ճանապարհի օտարման շերտի հարակից մասում Արեն Արսենի Գևորգյանը (ծնված՝ 18.05.1999թ., անձնագիր՝ AP0436683, տրված՝ 21.12.2015թ., «066»-ի կողմից, հասցե՝ ք. Վանաձոր Մաշտոցի 3-րդ նրբանցք 10 տուն) սեփականության իրավունքով իրեն պատկանող հողատարածքում, առանց լիազոր մարմնի հետ (ՏԿԵՆ) համաձայնեցման (ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2404-Ն որոշում) ինքնակամ կառուցել է շինություն, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք է:

2024 թվականի հուլիսի 29-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի օգոստոսի 12-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է Արեն Արսենի Գևորգյանը: Արեն Գևորգյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը ետ է վերադարձել «տեղափոխված» նշումով: 2024 թվականի օգոստոսի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի նոր լսումներ: Փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը ետ է վերադարձել նույն նշումով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1.-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն 2024 թվականի օգոստոսի 12-ին ծանուցումը տեղադրվել է նաև Հայաստանի Հանրապետության

հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (azdarar.am) կայքում (նույնականացման համարն է 1536263 ): Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո հինգերորդ օրը համապատասխան ծանուցումը համարվում է հանձնված (ստացված):

Վարչական վարույթի լսումներին պատշաճ ծանուցված Արեն Գևորգյանը սակայն կրկին չէր ներկայացել:

Վերոգրյալի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 23 օգոստոսի 2024 թվականին ընդունվել է «Արեն Արսենի Գևորգյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1962 որոշումը:

Որոշման համաձայն Արեն Արսենի Գևորգյանը ենթարկել է վարչական պատասխանատվության՝ 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով և վերջինիս պարտավորեցվել է վերացնել վարչական իրավախախտման հետևանքները:

Որոշումը 23.08.2024 թվականին ուղարկվել է Արեն Արսենի Գևորգյանին: Փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը ետ է վերադարձել «տեղափոխված» նշումով: 10.10.2024 թվականին որոշումը տեղադրվել է նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (azdarar.am) կայքում (նույնականացման համարն է 1562503): Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

Արեն Արսենի Գևորգյանը որոշման վերաբերյալ իրազեկված է համարվում 15.10.2024 թվականին, ուստի որոշումը ուժի մեջ է մտել 16.10.2024 թվականին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Արեն Արսենի Գևորգյանի կողմից վարչական բողոք ներկայացվել է 14.10.2024 թվականին: Վարչական բողոքը ներկայացվել է մինչև վարչական ակտն ուժի մեջ մտնելը: Բացի այդ վարչական բողոքում Արեն Գևորգյանը որպես բնակության հասցե նշել էր. Վանաձոր Մաշտոցի 3-րդ նրբանցք 10 տունը, որը հանդիսանում է հենց այն նույն հասցեն, որտեղ Վանաձորի համայնքապետարանի ուղարկված փոստային ծանուցագրերի հետադարձ կտրոնները ետ են վերադառնում «տեղափոխված» նշումով:

Վարչական բողոքում բողոք բերող անձը վկայակոչում է հետևյալ փաստերը.

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 23 օգոստոսի 2024 թվականին ընդունվել է «Արեն Արսենի Գևորգյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1962 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջանկյալ դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):

Արսեն Գևորգյանը իր կողմից ներկայացված վարչական բողոքում նշում է որ իր նկատմամբ ընդունվել է միջանկյալ վարչական ակտ, սակայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում

քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, իսկ ինքը հնարավորություն չի ունեցել իրացնել իր լսման իրավունքը: Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալները, խնդրում է կրկին հրավիրել վարչական վարույթի լսումներ, որպեսզի հնարավորություն ունենա ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար:

Արեն Գևորգյանի կողմից 14 հոկտեմբերի 2024 թվականի վարչական բողոքի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: 2024 թվականի հոկտեմբերի 28-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով վարչական վարույթի մասնակիցը ծանուցվել և չէր ներկայացել:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 23.08.2024 թվականի թիվ 1962 որոշումը ընդունվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 29.07.2024թ. տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա: Որոշումը իրավաչափ է և փոփոխման ենթակա չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1.Արեն Արսենի Գևորգյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 նոյեմբերի 2024 թվականի N 2531

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 43 ՇԵՆՔ, 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Սամվելի Պետրոսյանի 30.10.2024 թվականի թիվ 02/18255 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28102024-06-0023 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.10.2024 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրեր: 2024YD2YVB,20246Z2SB8), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

1.Տարանջատել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 43 շենք, 18 հասցեում գտնվող Տիգրան Սամվելի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 43 շենք, 18 հասցեում գտնվող տարանջատված գույքերին տրամադրել փոստային հասցեներ.

ա.63.6քմ մակերեսով գույքի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Վարդանանց փողոց, 43 շենք, 18 բնակարան.

բ.58.3 քմ մակերեսով գույքի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Վարդանանց փողոց, 43 շենք, 18/1 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր